ՍԱՐԳԱՐԻՏ ԹԱՌԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԴՐՎԱԳՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՄԱՄՈՒԼՈՒՄ /1918-1920ԹԹ./

Հայաստանի Հանրապետության հռչակումը խթանեց քաղաքական կյանքի աշխուժացմանը: Հանրապետության հռչակումից հետո հայ քաղաքական կուսակցությունները որդեգրեցին առավել ազգային դիրքորոշում, ակտիվ աշխատանք ծավալելով հատկապես իշխանության մարմինների ձևավորման շրջանում: Հայաստանում գործող կուսակցությունները հետևյալներն էին՝ Հայ Հեղափոխական Դաշնակցություն, Հայ Ժողովրդական, Սոցիալ-դեմոկրատական /մենշևիկյան-բոլշևիկյան/, Սոցիալիստ-հեղափոխական /էսէռական/, Հայ Սահմանադրական Ռամկավար, ՍԴ հնչակյան և «Սպեցիֆիկների»կազմակերպությունը: Դրանցից հասարակական-քաղաքական կյանքում առավել ազդեցիկները համապատասխան մանդատներ ստացան խորհրդարանում: Խորհրդարանական ամբիոնը հայ քաղաքական կուսակցությունների համար դարձավ միմյանց քննադատելու և քաղաքական կոփվածություն ստանալու միջոց:

Հայտնի է, որ ՀՅԴ Կուսակցության կենտրոնը մինչև 1918թ-ի հուլիս ամիսը գտնվում էր Թիֆլիսում,որտեղ գործում էր Դաշնակցության բյուրոն, այն հրատարակում էր կուսակցության պաշտոնաթերթ «Հորիզոն»-ը: Հայոց Ազգային խորհրդի՝ Երևան փոխադրվելու հետևանքով, ՀՅԴ-ն այնտեղ ուղարկեց գրեթե իր բոլոր պատասխանատու գործիչներին, Թիֆլիսում թողնելով «Աշխատավոր»-ի շուրջը համախմբված երիտասարդ այն կուսակցականներին, որոնք գլխավորեցին Վրաստանի կազմակերպությունը:[1] Հայտնի է,որ դեռևս - Թիֆլիսում գտնվելու շրջանում որոշվեց ապագա Խորհրդարանում կուսակցությունների անդամակցության թվի հարցը, ՀՅԴ-ն ստանալու էր 18 ձայն: Դաշնակցական մամուլը, հակառակ ընդդիմադիր մամուլի,վկայում է,որ Խորհրդարանում ստացած իրենց քվեները չէին համապատասխանում ո՛չ իրենց ունեցած հեղինակությանը, ո՛չ էլ հասարակության մեջ գրաված դիրքին: Դրանում չէր դրսևորված նաև կուսակցության անդամների ու համակիրների ճշմարիտ թվակազմը: «Կասկածից դուրս է,- գրում է, «ՎԷՄ» ամսագիրը, որ դաշնակցությունը շատ ավելի հետևորդներ ուներ, քան խորհրդարանական մյուս երեք կուսակցությունները միասին վերցրած»:[2] Հակառակը, ավելի ու ավելի էր տարածվում այն տեսակետը, թե Դաշնակցությունը իրականում «չի վայելում այլևս հայ ժողովրդի վստահությունը»:

Իր կենտրոնը Երևան փոխադրելուց հետո ՀՅԴ-ն Թիֆլիսյան շրջանի համեմատությամբ նկատելիորեն աշխուժացրեց իր աշխատանքները և ձեռք բերեց ազդեցիկ դիրք: Դաշնակցական մամուլը Թիֆլիսյան շրջանը բնորոշում է Անդրկովկասյան «նեղիչ միջավայրում գտնվելու» շրջան,որի մեջ նա ընկել

---

[1] Տես, ՎԷՄ, Ե, 1934, մայիս-հունիս, էջ 42-60:
[2] Նույն տեղում,

էր Փետրվարյան հեղափոխության արդյունքում,ինչն էլ և խիստ թուլացրել էր նրա ուժն ու ազդեցությունը: Մենք համամիտ ենք դաշնակցական մամուլում հայտնված այն կարծիքի հետ, որ դաշնակցության փոխադրումը Երևան շահեկան էր, այն նպաստեց ուժերի համամասնության փոփոխմանը հօգուտ Դաշնակցության:

Հակառակ ՀՅԴ-ի Երևան տեղափոխվելն անբարենպաստ անդրադարձավ ընդդիմադիր աջ դիրքերից հանդես եկող Հայ ժողովրդական կուսակցության վրա: Այս կուսակցության բարձրագույն մարմնի՝ ԿԿ-ի նախագահն էր Մ. Պապաջանյանը, փոխնախագահը՝ Ս. Հարությունյանը:[1] Կուսակցությունը կազմած էր հակասոցիալիստական դիրքերում: Այն կրում էր Ռուսական կադետների ազդեցությունը, ինչը և ցայտուն կերպով արտահայտված էր ծրագրի մեջ: Հայ ժողովրդականների որդեգրած գաղափարներն արտահայտվում էին հիմնականում կուսակցության կողմից հրատարակվող «Ժողովուրդ», «Մշակ» թերթերի էջերում: ՀԺԿ-ի ղեկավարությունը, որ հավակնում էր ստանձնել քաղաքական կյանքի կառավարումը, ուստի հայրենիք ուղարկեց կուսակցության գործիչներ՝ Ստեփան Մալխասյանին և Արշալույս Մխիթարյանին: Կուսակցության առավել երևելի հատվածը մնաց Թիֆլիսում: Կարելի է ամբողջովին համաձայնվել մամուլում արտահայտված այն կարծիքի հետ, որ ՀԺԿ-ն հայ հասարակության մեջ, ունենալով «ամուր հող», վերոհիշյալ սխալը թույլ տալով, կորցրեց իր ազդեցությունն ու բռնեց քայքայման ուղի[2]:

Այդ պատճառով կուսակցության ընդդիմադիր դիրքորոշումը որոշ չափով մեղմացավ, որը և հանդիսացավ ներկուսակցական պառակտման պատճառ: Երևանի ՀԺԿ քևի ցուցաբերած չափավոր դիրքորոշումը կամ ընդհանրապես ընդդիմադիր դիրքերի լքումը, երևաց այն պահից, երբ ժողովրդականների խմբակցությունը քվեարկեց Հ. Քաջազնունու կառավարության օգտին: Այդ կապակցությամբ աղմկոտ հրապարակումներ լույս տեսան Երևանում տպագրվող «Ժողովուրդ» թերթի էջերում:

«Մշակը» իր հերթին սուր քննադատության էր ենթարկում Հայոց ազգային խորհրդի գործունեությունն առհասարակ: Լույս տեսած բազմաթիվ հոդվածներում բացասական կարծիքներ էին արտահայտվում ինչպես կառավարության Հայաստան մեկնելու, այնպես էլ Հայոց ազգային խորհրդի յուրաքանչյուր քայլի վերաբերյալ: Նշված խնդիրների վերաբերյալ ՀԺԿ-ի կարծիքը մանրամասն ներկայացվեց «Մշակի-ի 1918թ. հուլիսի 13-ի համարում:

«Երկրի այժմեան ֆինանսական, տնտեսական ծանր պարագաներին, այժմ երբ հայ ազգի բախտը որոշվում է համաշխարհային կենտրոններում, երբ կառավարության գլխավոր աշխատանքը պիտի կենտրոնանա դիվանագիտական կապերի և բանակցությունների վրա, մենք գտնում ենք միանգամայն սխալ և վտանգավոր քայլ մինիստրության մեկնելը Երևան:»[3]

Ինչ վերաբերում է Հայոց Ազգային Խորհրդի Երևան մեկնելուն, Հայ ժողովրդականները գտնում էին, որ դա պետք է լինի ժամանակավոր, պատ-

---

[1] Տես Ժողովուրդ, 1918թ., 1դեկտեմբերի:
[2] Տես ՎԷՄ, 1934, մայիս-հունիս,42-60:
[3] Մշակ,13 հուլիսի,1918:

ճառաբանելով թե Հայոց Ազգային խորհուրդը ներկայացնում է ամբողջ Ռուսաստանի հայությունը, որը ապացույց է հանդիսանում այն բանի, որ հայությունը չի սահմանափակվում միայն Հայաստանի հանրապետության սահմանափակ տարածքով:

«Մշակի»-ի սուր քննադատությունը որոշ չափով մեղմացավ գլխավոր խմբագիր և Հայ ժողովրդական կուսակցության գաղափարախոս Համբարձում Առաքելյանի սպանությունից հետո, երբ թերթը տնօրինող առավել երիտասարդ կուսակցականները սոցիալիստական ուղղվածություն ընդունեցին: Տարբեր հարցերի շուրջ,այնուհետև,հակասությունները շատ խորացան և հանգեցրին կուսակցության երկու թևերի միջև լուրջ բախումների:

«ՎԵՄ»-ում ձախակողմյան ընդդիմության առաջին շրջանի բնորոշումը այսպիսին է՝ «պատասխանատու», այսինքն մեղմ կամ արտախորհրդարանական կյանքում ոչ ակտիվ: Նման վարքագիծը, կարծում ենք, ավելի շատ պայմանավորված էր ֆրակցիաների փոքրաթիվ լինելով և ազդեցության ոլորտի բացակայությամբ՝ ինչպես խորհրդարանում, այնպես էլ ժողովրդի մեջ: Ձախակողմյան ընդդիմությունը աշխատավորության լայն շրջաններում սոցիալական ձևավորված հենարան չուներ,մասնավորապես չկար բանվոր դասակարգ, ինչպես նշում էր հենց ձախակողմյան մամուլը:[1] Նա հիմնականում իր գործունեությունը ծավալում էր խորհրդարանական քննարկումների միջոցով, այն էլ՝ շոշափելով հիմնականում մշակութային, սոցիալ-տնտեսական հարցեր:

Էսէռները հրատարակում էին «Աշխատանքի դրոշակ»,«Սոցիալիստ-հեղափոխական»թերթերը, որոնք և արտահայտում էին նրանց ծրագրային ու տակտիկական հիմնական սկզբունքները:

Ձախ ընդդիմությունը հիմնական դիրքորոշումամբ չէր արտահայտում ինքնուրույնության գաղափարներ: Ազգային հարցի շուրջ այն իր կախվածությունն էր ընդգծում Ռուսաստանից և հանդես էր գալիս «համակովկասյան ֆեդերացիա՝տնտեսական սերտ կապերով կապված Ռուսաստանի հետ» ձևավորելու[2], կամ Ռուսաստանի հետ համապետականսնություն ստեղծելու օգտին:[3] Նրա նպատակներից ամենակարևորը,որն արտահայտվում էր թ'ե խորհրդարանում,թ'ե նրա պատերից դուրս,Հայաստանը կրկին Ռուսաստանի մի մասնիկը դարձնելն էր:[4]

Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը ՀՀ-ում, չուներ հարուստ սոցիալական բազա: Կուսակցությունը լույս էր ընծայում «Կայծ»,«Խոսք»,«Բանվորի ձայն» թերթերը: Նրանց կուսակցության հիմնական կարգախոսներից մեկը «հեռավոր հյուսիսի» հետ միավորելն էր: Համարվում էր, որ «անկախ այն հանգամանքից, թե ինչ կուսակցության ձեռքին է գտնվում կառավարության ղեկը...նա կարող է միայն մեր լավագույն բարե-

---

[1] Տես ՎԷՄ, Փարիզ,1933, 67-69:
[2] Խոսք,1918, 22սեպտեմբերի:
[3] Տես Աշխատանք,1919թ, 17մայիսի:
[4] Խոսք, 1918, 22 սեպտեմբերի:

կամը լինել, նա է մեզ մոտ, նրան ենք մենք արդեն ընտելացել և նա չի ծգտում Կովկասը գաղութ և շուկա դարձնել...»: Սոցիալ-դեմոկրատները «Բորբա»-ի էջերին իրենց բացասական կարծիքը հայտնեցին Հայոց ազգային խորհրդի և կառավարության Երևան տեղափոխվելու հարցի վերաբերյալ պատճառաբանելով, որ քաղաքական դրությունը և արտաքին պայմանները չէին նպաստի այդ մարմինների արդյունավետ աշխատանքին: Հենց սկզբից սոց.-դեմոկրատները չէին ցանկանում իրենց կուսակցական կենտրոնը տեղափոխել Երևան: Այս կուսակցության նշանավոր անդամները ևս մնացին Թիֆլիսում: Երևան ուղարկվեց Հ. Ազատյանը, այս փաստը հետագայում պատճառ հանդիսացավ կուսակցության միատարրության խաթարմանը:

Չախակողմյան կուսակցությունների համար «հայկական գավառների» մայրաքաղաք գալը սկզբնական շրջանում մի ընդհանուր անբարենպաստ հող ստեղծեց: Նրանք կտրվեցին անդրկովկասյան մյուս մայրաքաղաքներում գործող իրենց մայր կուսակցություններից, որոնք բավականին հզոր էին, և զրկվեցին այն ամբողջ օժանդակությունից, որ իրենց ցույց էր տրվում դրանցից յուրաքանչյուրի կուսակցական կենտրոնից: